մխիթարութիւն և որքա՜ն սպառ ու որքա՜ն տառապանք մխիթարութիւն։

Մի՞թէ սպասել թէ ինչպէս կփերջանան Եւրոպայի դիպլոմատիական կոնգրեսները, սպասե՞լ թէ ինչ վճիռ կհայացնեն հայաստանի համար այդ կոնգրեսներում, որոնց մէջ ոչ սիրտ կայ, ոչ հոգի, ոչ մարդասիրական գաղափար, ոչ էլ քրիստոնէական զգացմունք։

Եւրոպան փոքրուց է դադարել իր պատմութեան մէջ քրիստոնէական էջեր աւելցնելու. Եւրոպան հայաստանի վրայ նայում է, ոչ իբրև մի թշուառ երկրի, որի վշտերն, իրօք, հարկաւոր է ամոքել, այլ մի համեղ պատառի, որ որևէ կերպ կլանել կարողանայ։

Ով գիտէ, գուցէ բնական քաղաքականութեան անիւը մի օր մի այնպիսի բարի դարձուի, որ հայաստանի վրայ էլ մի լոյս ծագէ, բայց այդ պէտք է պատահմունքի արդիւնք լինի, թէպէտ և մենք չենք յուսահատում. մենք հաւատում ենք, որ մի օր այդպիսի մի պատահմունքի կաջողենք հանդիպել, սակայն այսօր պէտք է յոյս դնել այն հեծեծանքներին ու հառաչանքներին, որ չէ ընդհատւում անագորոյն հայաստանում։

Եթէ մենք հնարաւորութիւն ունենք գաղթողներ ապահովացնել, մինչև ունենք ֆոնդ հիմնել, արդ՞ որքան աւելի պարտաւոր ենք մտածել մի ամբողջ երկրի համար, մի ամբողջ ժողովրդի ապագայի փրկանքի մասին։

Պէտք է ոչ միայն հայաստանի քաղաքական դրութեան վրայ նայել, այլ և պէտք է նրա մէջ ապրող հայի տնտեսական վիճակը շօշափել և համոզուել թէ որքան արիւն և թէ որքան արտասուք կայ այնտեղ։

Սովը մի կողմից, հարստահարքն ու անօրէն դրութիւնը միւս կողմից մաշել են ժողովրդի սրտերը և եթէ ոչ-որ ուշադրութիւն չդարձնէ, եթէ օր առաջ օգնող ձեռներ չմեկնուեն դէպի նրանց, ով գիտէ ո՞ր անդունդի եզրին պիտի երևան նրանք։

Պէտք է բարբարոս չը հանդիսանալ, պէտք է ոչ միայն լսել, որ այնտեղ հայաստան կայ, մայրենի երկիր, թշուառների երկիր և այդ երկրում արիւնահանքից եղբայրներ ու քոյրեր ու այդ եղբայրների ու քոյրերի սրտերը դողդողում վշտի ձայներով, լացի ձայներով։ Այն վիշտը համայն ազգինն է, այն լացը բոլոր հայերինն է։ Պէտք է ձեռք մեկնել դէպ այնտեղ։*)

Ն. ՆԵՐՍԷՃ

*) Եւ այդ ձեռքը պէտք է մեկնել օր առաջ. պէտք է չսպասել ընդհանուր ժառանգական աղքատութեան և գաղթականութեան չհասցնել ամենավերջին մեզ. Խմբ.

# Փ Շ Ո Ւ Ր Ն Ե Ր

31

*Ինձ կանչիր...*

Երբոր գիշերը մահագոյժ ձայնով
Գոռում է աշնան քամին վշտալիր,
Եւ սիրտը դողում՝ մաշւում երկիւղով,
Դու այն ժամանակ անվախ ինձ կանչիր.

Երբոր մենակ ես. տխուր անկիւնում
Ծանր մտքերով տանջւում ես անվերջ,
Ինչպէս ջուրն անքուն՝ յուզւում, վառւում,
Ինձ կանչիր. շուտով ցաւիդ ես տամ վերջ։

Երբոր ջերմագին կուրծք ես որոնում՝
Գրկած գլուխդ վրան թեքելու,
Եւ ամենուրեք սառնոց ես տեսնում,
Ինձ կանչիր. ես ջերմ պատրաստ գրկելու։

Երբ դառն արցունքով ջրելով վէրքեր,
Դռներ բաղխեցիր, եղբայր կանչելով,
Եւ քար մեկնեցին քեզ բոլոր ձեռքեր,
Ինձ կանչիր, սիրոյս միշտ հաւատալով։

Երբ ինչպէս ազնիւ գինուոր անդադրում
Սուրբ գաղափարի համար կռուեցիր,
Փոխարէն փշեայ դափնիք ես կրում,
Ա՜հ, մի վշտանար. շուտով ինձ կանչիր։

Երբ գերի ընկած ընկերից համար
Սուր սլաքների կուրծքդ դէմ տուիր,
Նրան փրկեցիր, արնաթաթախ ընկար,
Վերջին հոգոցով դարձեալ ինձ կանչիր։

ԱՐՇԱԿ ԿԱՑԵՌՈՒՆԻ

# ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

«Մարտու»ի անցեալ համարում տպուած պրոֆ. Օրմանեանի առաջարկը՝ մի գիտական կաճառ հիմնելու Եգիպտոսում՝ չէ կարելի ժամանակից չհաւանել։

Ճշմարիտ է, մենք ունեցել ենք և ունենք գիտական կենդրոններ. Վենետիկ, Վիեննա, Ս. էջմիածին, Արմաշ և այլն, բայց դրանք բոլորը չեն լրացրել այն կարևոր բացը, որոնց մասին խօսում է Սրբ. Օրմանեանը։

Յիշեալ կենդրոններից ամենից բեղմնաւորը և արդիւնաւորը եղել է Վենետիկը, բայց անբախտաբար նա չկարողացաւ այնպէս մի խթան հանդիսանալ, որ այսօր մեր գրականութիւնն ու դպրութիւնը

թէ Ռուսիայում և թէ Թիւրքիայում այսօրուան ազգա-յին կեանքի մէջ չմնային։

Այդ մտաւոր կենդրոնների ղեկավարները բաւական չէ, որ հոգեւորականներ են եղել և կան, այլև ցաւալին այն է, որ հոգեւորականներից, որոնցից շատերը եւրոպական ուսումով ծանրաբեռնուած, չկարողացան իրանցից թօթափել սքոլաստիկ դպրոցի բրգամխտները և նրանք ոչինչ արին թէ գեղարուեստական գրականութեան և թէ հայ դպրոցների համար։

Այդ կենդրոնները չկարողացան եւրոպական իմաստով գրականութեան և նոյն իմաստով մանկավարժութեան խանձարուր հանդիսանալ։ Այդ կենդրոններից հրապարակ չհան այնպիսի բանաստեղծներ, վիպագիրներ, թատերագիրներ, հրապարակախօսներ ու մանկավարժներ, որոնք իրանց գործերով կարողանային եւրոպացիների շարքում աչքի ընկնող տեղ ունենալ։

Անուրանալի է նրանց գործը բանասիրութեան ասպարիզում, անուրանալի են նաև նրանց պատմական ու լեզուաբանական աշխատութիւնները, բայց և այնպէս մենք տեսնում ենք ինչ անդամահատութեան է ենթարկուած և շարունակում է ենթարկուել հայոց լեզուն, այլև տեսնում ենք, որ հայ աշակերտին չենք կարողանում տալ պատմութեան մի դասագիրք, որ ոչ տաւտոլոգիաներով և գիւցազներգութիւններով յերիւրուած, այլ առողջամիտ իրականութիւնից առնուած պատմութիւնից լինի շարադրուած։

Մենք տեսնում ենք թէ ինչպէս մի՛ յանդուգն բռնաւորը ամենայն ճարպիկութեամբ, այսուայն շրջաններ նետուելով, կարողանում է մարդիկ գտնել, գրախօսի պատմուճանով զարդարուն՝ և ապա կարողանում է այդպիսների միջոցով բանաստեղծի հռչակ վաստակել և ընդհակառակն տեսնում ենք որ կան իսկական բանաստեղծներ, առկայն ցուրտ հանդայնալու ընդունելութիւնից՝ մնում են մենութեան մէջ, տաղանդը թաղնում զրուանի տակ։ Նոյն վիճակին են մնացել և մնում են ենթարկուած բազմաթիւ տաղանդներ՝ գեղարուեստական գրականութեան այս և այն ճիւղի ասպարէզներից։

Այս իրողութեան գլխաւոր պատճառը լուրջ, պատրաստուած և անաչառ գրախօսների բացակայութիւնն է։ Եւ ահա այդպիսներին հրապարակ հանելու՝ այնպիսի մի գիտական կաճառը, որպիսին առաջարկում է արքազան Օրմանեանը կարող է իսկական փաստար հանդիսանալ։

Ապա մենք ականատես ենք այն բարբարոսութեան, որ անցի ունի մեր լեզուի և մեր ուղղագրութեան վերաբերմամբ։

Հապա թէ այնպիսի վայրագ և այնքան յանդուգն խաչելութեան ենթարկուած լինի մի ուրիշ ազգի լեզուն ու ուղղագրութիւնը, որպիսին անցի ունի և շարունակում է ունենալ հայոց լեզուն և հայ ուղղագրութիւնը։

«Վեւ»ի և «Իւն»ի կռիւը զարմանք կրկէսային ըմբշամարտութիւն և երկար տարիներ կաշկանդեց հայ դպրութեան գործին նուիրուած մարդկանց միտքերը։ Այդ կռիւը դեռ չէ վերջացել և մինչ օրս դեռ ուշադրի համար մնաց հասկանալի թէ որը պիտի լինի իշխանաւոր. «Իւն»ը, թէ «Վեւ»ը։

Եւ մինչդեռ այս շարադրութեան «Իւն»ն ու «Վեւ»ը չէին, Մէկն էլ ազդեցն տալու «յ» տառի վրա նստեց, մի ուրիշը «ու» տառի դէմ զինուեց։ Այսպէս շուտով հերթը կհասնի մնացեալ տառերին և եթէ այսպէս շարունակուի, հեռու չէ, ուրեմն այն օրը, որ ամեն մէկը բանն ու բրիչն առած շտապէ դէպի Ս. Մեսրոպի գերեզմանը ու առնէ նրան Օշականի եկեղեցուց և տանէ-մտէ Քասախի ջրերը։

Հայ տառերն այսպէս տապալելուց չբաւականանալով, նորագոյն գրականութեան ասպարէզն իջան ուրիշ երանգի ասպետներ էլ, որոնք հերոստրատեան փառքով տարուած ճգնեցին և դեռ ճգնում են հայ լեզուն էլ ինկվիզիցիայի առեանին արժանացնել։

Մինչդեռ Եւրոպական ազգերի, նրանց շարքում և ռուսների գեղարուեստական գրականագէտներն աշխատեցին և շարունակում են աշխատել՝ ընդհանրացնել լեզուն, գեղեցկացնել, հարստացնել, մեր մէջ մի՛ բոլորովին նոր հասանք մտաւ։ Մեր մէջ սկսեցին նոյն կրկէսային խաղն ու մարաթ. հանդէս եկան գրականագէտներ ու գրականական լեզուն փոխարինեցին այն գռեհիկ լեզուներին, որ իրանց առաջին անգամ թօթուել են իրանց մենագաւառում։

Ապա նոյն շարադրանքին վիճակին ենթարկեցին և մանկավարժութիւնը և դպրոցների դասագրքերը։

Ահա այս բոլոր տխուր իրողութիւնները նկատի առնելով, պէտք է սիրով ընդունել Սրբ. Օրմանեանի առաջարկը, պէտք է ունենալ գիտնականների կաճառ, հմուտ մասնագէտ և հեղինակաւոր անդամներով, որ հայոց գրականութեան ու դպրութեան ասպարէզները մաքրուին զառանցներից, ինքնակոչ գիտնականներից։

Սակայն խնդիրն այն է, որ այդպիսի կաճառը, եթէ հիմնելու է տպագրութեան գործի 400 ամեակի առիթով այն չէ համապատասխանում Մեծ Թարգմանչի տօնախմբութեան։

Այս տօնախմբութիւնը, շատ անգամ ասել ենք, նորից կրկնում ենք, պատկանում է հայ գրականներին, հետևաբար այդ օրը պէտք է կատարել մի այնպիսի գործ, որ հայ ժողովուրդը հասկանայ, թէ ին-

քեր են 400 տարուայ ընթացքում կեանք մաշել տպագրական վսեմ գործի համար։ Ապա ժողովրդին այդ հասկացնելուց՝ պէտք է հասկացնել նաև երախտագէտ լինելու. թէ նախնեաց յիշատակների և թէ նրանց հետևող այսօրուայ մշակների առաջ։ Եւ դրա համար Մեծ Թօրէյեանին միակ համապատասխան, միակ նպատակայարմար գործը «գրախանական ֆոնդն» է»։ Այդ «ֆոնդ»ը պիտի լինի աշխարհի երեսին ապրող ամեն մի խղճական գրականի միջև։ Այդ ֆոնդը խառնակ կլինի հայ ժողովրդի տպագրութեան գործի 400 ամեակի խղճական գնահատման։ Այդ ֆոնդը փառք կլինի այն ամեն հայի համար, որոնց սիրտը կուրախանայ ժողովրդի ուրախութեամբ և կտրամի նրա ցաւերով։ Եւ այդ ֆոնդն ամէն գիւղին է հիմնել և գիւղին է բարգաւաճել։

Եւ մինչդեռ ապիկարութեամբ առաջ եկած «գրքաբայական ֆոնդ»ը ինչպէս և նոյնն նկատել է մեր աշխատակից Ն. Ներսէսը («Մշակ»ի № 8) անհրաժեշտ է հանդիսանում առանձնայերի և մնացեալ հայերի տրամադրում, «Դրախանական ֆոնդ»ը ինչպէս ապացինք միութեան օգտին է գառնում։ Այն կլինի մի օջախ, որին մեր կմնեննեն ամեն մի հայ առանց կրօնի խտրութեան։

Եթէ մեր կաթոլիկ եղբայրները չեն կարողանալու «գրքապացական ֆոնդ»ից օգտուել, ապա նրանք, որ զատող մրքիկը վանելով, միշտ մեզ հետ ապրում են մի սիրով, մի զգացմունքով, նրանք եւ յաւէտ կերանք մեռներին կգան կկանգնեն «գրախանական ֆոնդ»ի շուրջը և այնուհետև Մեծ Տօնի փառքը կլինի լրիւ, այնուհետև հանդէսը կդառնայ համազգային։

Ի հարկէ, արդարն Օրմանեանի առաջարկը խորթ չէ Մեծ Թօրէյեանի ոգին, այսուամենայնիւ այն չէ կարող միութեան այն ցանկալի օգնը կազմել, որի համար փաղուց նկատուած է, փաղուց խօսուած և որը, տարակոյս չկայ, որ ամեն մի հայի ցանկութիւնն է։

Այո, տպագրութեան գործի 400 ամեակին շուքը տալը և Մեծ Թօրէյեանն անմահացնողը միմիայն պէտք է լինի «Գրախանական ֆոնդ»ը։

## ԼՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐՈՒՄ

Ոչ կասկած կայ, ոչ էլ տարակոյս, որ այսօր ամեն մի՛ իր ինքնատիրութիւնը յարգող և օրէնքից չշեղուող հայը յաւշուած է հայ ուսումնարանների վերաբերեալ էջմիածնի վերջին կարգադրութեան առիթով։

Կաթուղիկոս Սուրէնեանն առանց ժողովրդի կամքն իմանալու ընդունում է կառավարութեան այն կարգադրութիւնը, որ վերաբերում է հայ ուսումնարանների ուսուցիչներին։

«Մշակ»ը այս կարգադրութիւնն ընդունում է շատ խորապէս սրտով, առարկելով որ այդպիսի օրէնք գործադրուել է Մակար, Խրիմեան և Իզմիրլեան կաթուղիկոսների օրօք։

«Այսպէս, օրինակ, ասում է «Մշակ»ը. Ներսիսեան դպրանոցի տեսուչների, ուսուցիչների նշանակման ժամանակ առաջնորդները խնդրել են նախնական հաւանութիւնը. Իզմիրլեան Կաթողիկոսը Բագրատ վարդապետին Ճեմարանի տեսուչ նշանակելիս հարցրել է նախնական արգելք լինելու կամ չլինելու մասին, նոյնը արել է սինոդը՝ Ալթունեան ուսուցչին ուսուցիչ նշանակելիս և այլն. Ուրեմն անհերքելի իրողութիւն է, որ 272-րդ յօդուածը Թեմական դպրոցների և Ճեմարանի վերաբերմամբ գործադրուել է Մակար, Խրիմեան և Իզմիրլեան կաթողիկոսների օրօք. Սակայն չէ գործադրուել եկեղեցական դպրոցների վերաբերմամբ և մինչև 1910 թ. այդպիսի պահանջ չէ արուած». (Ընդգծումը մերն է)։

Ապա «Մշակ»ը փոքր ինչ յետոյ միևնոյն յօդուածի մէջ գրում է.

...«Յաւուրս հաւանում է և փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովի գրութիւնը՝ 1913 թ. յունուարի 31-ին, որով խնդրում է նորին սրբութիւնից կարգադրել ի կատար ածել օրէնքը.

Աճա գրանից յետոյ միայն Կաթողիկոսն արձակում է յանուն Թեմական առաջնորդների կոնդակ 1913 թ. մարտի 10-ին, որով հրամայում է նոր ուսուցիչներ հրաւիրելու դէպքում առնել նախապէս նախնական հաւանութիւնը».

Դժուար թէ Կաթողիկոս Սուրէնեանը «Մշակ»ի այս փաստարկութիւնից գոհ մնայ։

Մշակի ասելով, Մակարի, Խրիմեանի և Իզմիրլեանի օրօք հայ ուսուցիչների բարեյուսութեան խնդիրը ասել է ունեցել այնքան անզամ, որոնց թիւը մի մեռի մատների վրայ կհամրուէր։ Դրանք Ճեմարանի ու Ներսիսեան դպրանոցի տեսուչներ են եղել և մի ուսուցիչ, որի անունը «Մշակ»ը նոյնիսկ յիշում է։

Ապա նոյն «Մշակ»ի ասելով մինչև դպրոցների ուսուցիչների բարեյուսութեան խնդիրը՝ նահանգապետներին յանձնելու ակար կատարում է կաթողիկոս Սուրէնեանը և կատարում է այնքան անտարբեր, որ իրան կաթողիկոսական գահին արժանացնող ժողովրդի ներկայացուցիչներն էլ չեն իմացել թէ ինչ է անում հայրապետանեայց ժողովրդապետական եկեղեցու ժողովրդի խաչ շնորհիւ ընտրուած գլուխը։

Սիրում ենք հաւատալ, որ «Մշակ»ը մեզ կուսակցական միտումներով ապրումների շարքերը չի մացնել, եթէ այսպիսի մի սիրունաբայրին խնդրում նրա բռնած դիրքը համարենք միանգամայն ոչ ուղիղ։

---

«Հորիզոն»ը զայրացել է այժմեան էջմիածնի դէմ և նոր-նոր սկսել է հասկանալ թէ երէկուայ իր փայ-